ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 303 – Ա **19 դեկտեմբերի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 4 հավելվածի « IV. Սևանի տարածաշրջան» բաժնի 10-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով նվազեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 43 - Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կանոնադրության 4.2. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 205.950.000 /երկու հարյուր հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ դրամ, որը կազմում է 20595 /քսան հազար հինգ հարյուր իննսունհինգ/ հատ 10.000 /տաս հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 20595 /քսան հազար հինգ հարյուր իննսունհինգ/ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են:»:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գայանե Էլիզբարյանին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման արդյունքում ազատել և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին սեփականության իրավունքով հանձնել «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հողատարածքը՝ շուրջ 2,165 հեկտար մակերեսով, հիվանդանոցային երկու մասնաշենքերը 2155,5 քառ. մետր և 1086,2 քառ. մետր մակերես տարածքներով, պահակատան մասնաշենքը՝ 33,0 քառ. մետր մակերես տարածքով, էլեկտրական ենթակայանի մասնաշենքերը՝ 52,6 քառ. մետր մակերես տարածքով և դիարանի շենքը՝ 78,6 քառ. մետր մակերես տարածքով:

3) կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք. Գավառ

Կազմված է 19.12. 2018թ.
Բաղկացած է 2(երկու) թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ______

Հավելված

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի
2018 թ. դեկտեմբերի 19 -ի
N 303-Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

-------- ԱՆՈՒՇՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից 25.02.2016թ.
գրանցման թիվ 222.120.889405
վկայական 03Ա 1039405
ՀՎՀՀ 08620315

25.02.2016թ. գրանցված
կանոնադրության թիվ 001-3
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

------ -------------------------- 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 205.950.000 /երկու հարյուր հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ դրամ, որը կազմում է 20595 /քսան հազար հինգ հարյուր իննսունհինգ/ հատ 10.000 /տաս հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 20595 /քսան հազար հինգ հարյուր իննսունհինգ/ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (**գրանցված 25.02.2016թ., գրանցման թիվ 222.120.889405, վկայական 03Ա 1039405)** բաղկացուցիչ մասը: